

Բուրումնացան մահն անոնց,  
 Պիտի յածի՛նք,  
 Լոյսի արծաթ անձրեւին տակ  
 Ու ծոցին մէջ  
 Թաւուտքներու կիսաթափանց գիշերներուն,  
 Ո՛վ երագին իմ աղջիկ:

### 30. ՅԱՅԳԱՆԿԱՐ

Համատարած անդորրութեան մը մէջէն,  
 Կիսաթափանց մըշուշներուն մէջ հալած  
 Ուրուագիծը տուներու՝  
 Որոնց լայնաբթիթ պատուհաններէն  
 Կը ժայթքեն  
 Լոյսի ցայտքեր՝ տարփագին ծաղիկներուն պըլլըւած:  
 Ու հեշտոտ ու մարմըրուն  
 Աղաղակն ալ նըւագներուն լարաւոր  
 Կը ծաղկեցնեն դիւթանքն անդորրիկ,  
 Գիշերուան մը երջանիկ:  
 Ու կ'երկարի՛, կ'երկարի՛  
 Խմբանկարը տուներուն՝  
 Տարտամօրէն փաթթըւած  
 Մէջն ապրշում մըշուշին,  
 Ու լայննալո՛վ, լայննալո՛վ  
 Դեպ ի ծովափն՝ որ երկչոտ  
 Կըսպասէ  
 Ալիքներու համոյրին:  
 Ու եզերքէն հանդիպակաց  
 Ծայրը դալար հրուանդանին,  
 Ուր վաղուց  
 Մեռան ճիչերը ցորեկին,  
 Ծովին փոթ փոթ երանգածուփ թաւիշին վրայ  
 Միապաղաղ կ'անդրադառնայ  
 Ուրուանըկարը խուսափուկ  
 Լոյսի ծըփուն ծաղիկին՝  
 Որ կը ծըլի փողփողուն ծովեզերքի փարոսէն:  
 Ու դեռ հեռուն,  
 Զաղաքէն ու բացավայրէն ալ անդին,